

Մեծարգո պարոն Վարչապետ,

Հարգելի հյուրեր, տիկնայք և պարոնայք,

Ավարտին է մոտենում 2021 թվականը և հետահայաց նայելով կարելի է փաստել, որ այն մեր տնտեսության համար որոշակի դժվարությունների տարի էր: Այնուամենայնիվ, կարող ենք գնահատել, որ մեր ընդհանուր ջանքերի շնորհիվ կարողացել ենք պահպանել գների և ֆինանսական կայունությունը Հայաստանի Հանրապետությունում:

Այսպես, տարեսկզբից մենք բախվեցինք ՀՀ տնտեսություն ներթափանցած զգալի արտաքին գնաճային ճնշման: Ստեղծված իրավիճակում Կենտրոնական բանկի գերխնդիրն էր գների կայունությունն ապահովել տնտեսության համար նվազագույն ծախսերով: Այդ առումով տարվա ընթացքում վարած մեր դրամավարկային քաղաքականությունը գնահատում ենք շատ հավասարակշռված: Ճիշտ է, գնաճը այսօր բարձր է մեր սահմանած նպատակային մակարդակից, բայց Կենտրոնական բանկի գործողությունների արդյունքում այն աստիճանաբար կնվազի՝ մոտենալով թիրախային ցուցանիշին: Տարվա ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքի չափավոր բարձրացումը թույլ տվեց նախևառաջ խուսափել գնաճի ավելի վատ սցենարից, խարսխել բնակչության գնաճային սպասումները՝ միևնույն ժամանակ չխոչընդոտելով պահանջարկի վերականգնումը: Եվ չնայած մոտակա ամիսներին արդեն մենք ականատես կլինենք գնաճի ցուցանիշի որոշակի նվազման, սակայն ամեն դեպքում պետք է շարունակել պահպանել զգոնությունը, քանի որ արտաքին աշխարհի գնաճը չի թուլանում, և գալիք տարին դեռևս իր մեջ պարունակում է զգալի գնաճային ռիսկեր և մարտահրավերներ:

Ֆինանսական կայունության առումով 2021 թվականը նույնպես դյուրին չէր: 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած ցնցումները իրենց անխուսափելի ազդեցությունն ունեցան ֆինանսական համակարգի ընթացիկ տարվա արդյունքների վրա: Տարեսկզբից, անորոշությունների զգալի աճի պարագայում, թե՛ տնտեսությունը, և թե՛ ֆինանսական համակարգը կրճատեցին իրենց ռիսկի ախորժակը, ինչն անդրադարձավ բանկային համակարգի վարկային ներդրումների վրա՝ հատկապես հաշվի առնելով նախորդ տարվա Կառավարության ծրագրերով իրականացրած զգալի վարկավորումը: Այնուամենայնիվ մեր ֆինանսական համակարգը ոչ միայն ունակ եղավ հաղթահարել այդ դժվարությունները, այլ նույնիսկ զգալի նպաստում ունեցավ երկրի տնտեսական խնդիրների մեղմմանը: Ֆինանսական հաստատությունները որոշակի բեռ վերցրեցին նաև սոցիալական խնդիրների աջակցման համար՝ ինչպես համավարակի, այնպես էլ պատերազմի հետևանքների հաղթահարման առումով: Կարող ենք փաստել, որ վերջին տվյալներով արդեն նկատվում է վարկային ներդրումների վերականգնում և գալիք տարին մենք վստահաբար

կմտնենք և կավարտենք ֆինանսական միջնորդության դրական զարգացումներով:

Ընդ որում, կցանկանայի հատուկ նշել, որ Հայաստանում գների և ֆինանսական կայունությունը ապագայում նույնպես երաշխավորված է, և դրա գրավականը ոչ թե առանձին ցուցանիշներ են, օրինակ միջազգային պահուստները, կամ բանկերի կապիտալը, այլ Կենտրոնական բանկի անձնակազմի գիտելիքն ու պրոֆեսիոնալ կարողություններն են, որոնք թույլ են տվել դիմագրավելու բազում ցնցումների և շատ անգամ են արժանացել մեր ներքին և միջազգային գործընկերների բարձր գնահատանքին:

2021 թվականի Կենտրոնական բանկի կարևոր ձեռքբերումների շարքին կարելի է դասել նաև նոր ռազմավարությունը, որտեղ ներկայացված են Կենտրոնական բանկի առաքելությունը, տեսլականը և արժեքները, ինչպես նաև մեր կառույցի և քաղաքականության զարգացման հիմնական ուղղությունները: Կցանկանայի հատուկ շեշտել մեր ռազմավարության համար անկյունաքարային հանդիսացող ֆինանսական ոլորտի թվայնացման օրակարգը: Քսանմեկերորդ դարում թվային հասարակություն, թվային միջավայր և թվային հասանելիություն ունենալն այլևս անհրաժեշտություն է և, կարծում եմ, թվայնացումը այն ուղին է, որը մեր քաղաքացիներին թույլ կտա օգտվել ավելի հասանելի և հարմար ֆինանսական ծառայություններից: Կարծում եմ, որ թվային տնտեսություն և հասարակություն ձևավորելու Կառավարության և Կենտրոնական բանկի համատեղ օրակարգը, Կառավարության առաջնորդման ներքո, կհանդիսանա ֆինանսների թվային վերափոխման հիմնաքարը և ուզում եմ հավաստիացնել, որ Կենտրոնական բանկը և ֆինանսական համակարգը ամենայն պատվախնդրությամբ է իրականացնելու իր վրա դրված բարձր պատասխանատվությունը:

Կարող ենք նաև փաստել, որ Կենտրոնական բանկը ներկայումս թևակոխել է վերափոխման մի նոր փուլ, ինչն աստիճանաբար սկսում է արտահայտվել մեր գործունեության տարբեր ոլորտներում: Այս ճանապարհին մենք զգում ենք մեր հասարակության, Ազգային Ժողովի և Կառավարության աջակցությունը և լիահույս ենք, որ մի քանի տարի հետո կունենանք էլ ավելի կարող, առաջադեմ, հետազոտական և նորարարական գերազանցության վրա հիմնված ամուր ինստիտուտ, որը կշարունակի առաջնորդել մեր տնտեսության զարգացումը գների և ֆինանսական կայունության ապահովման իր առաքելության ներքո:

Մաղթում եմ բոլորիս հաջողություններով և ձեռքբերումներով լի նոր տարի:

Շնորհավոր 2022 թվական